

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՆԿԵԶՅԱՆ ՇԱՔԵ ԶԱՎԵՆԻ

Արաբական Միացեալ Էմիրություններու հայ համայնքի

հասարակական-քաղաքական կեանքը 1970-ական թուականներէն մինչեւ մեր օրերը

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների

թեկնածուի գիտական աստիճանի համար

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Եղիազարյան Արման Սամվելի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ստեփանյան Խաչատուր Ռոստոմի

պատմական գիտությունների թեկնածու
Տանաջյան Լուսինե Ասատուրի

Առաջատար կազմակերպության՝

Արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հունիսի 19-ին, ժամը 13⁰⁰-ին Պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Պատմության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2026 թ. մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ. գ. գ., դոցենտ



Մուրադյան Հ.Ն.

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախօսութեան թեմայի գիտական նշանակութիւնն ու արդիականութիւնը:
Արաբական ծոցի երկիրներէն Միացեալ Էմիրութիւնները, այսուհետեւ (ԱՄԷ), որպէս արաբական աշխարհի ամենէն զարգացած երկիրներէն մէկը, իր զարգացման ընթացքին զգալի հետաքրքրութիւն յառաջացուցեր է տարբեր ազգերու մօտ, ներառեալ հայերը: Հայերու շարունակական գաղթը դէպի ԱՄԷ եւ ԱՄԷ-ի հայ համայնքի հետագայ ձեւաւորումն ու աճը կ'ընդգծեն սփիւռքի այս համայնքին պատմութեան եւ զարգացման համապարփակ ուսումնասիրութիւն իրականացնելու կարելորութիւնը:

Պէտք է արձանագրել, որ ԱՄԷ-ի հայ համայնքի հասարակական-քաղաքական կեանքը 1970-ական թուականներէն մինչեւ մեր օրերը ուսումնասիրութիւնը, հայ սփիւռքի նոր հատուածներու ուսումնասիրութեան տեսանկիւնէն մեծ կարելորութիւն կը ներկայացնէ, յատկապէս հաշուի առնելով փաստը, որ գրեթէ ուսումնասիրուած չէ: Հակառակ շարք մը աշխարհի սփիւռքի համայնքներու առընչութեամբ ծաւալուն հետազոտութիւններուն, ցարդ կը բացակայէր ԱՄԷ-ի վերջին քառասուն հինգ տարիներու ձեւաւորուած հայ համայնքի պատմութեան ու համայնքի զարգացման մասին համապարփակ գիտական ուսումնասիրութիւնը: Այս առումով սոյն ուսումնասիրութիւնը նպատակ ունի կամրջել այդ բացը՝ տրամադրելով համայնքի պատմական զարգացման, համայնքային կառոյցներու կայացման, համայնքի հասարակական-քաղաքական եւ կրթամշակութային կեանքի մասին մանրամասն վերլուծութիւն:

ԱՄԷ-ի հայ համայնքին ուսումնասիրութիւնը մեծապէս կարելոր է նաեւ այն պատճառով, որ համաշխարհայնացման ներկայիս գործընթացքին այն հայկական սփիւռքի համայնքներէն մէկն է, որ առաւել ենթակայ է պարբերական կերպափոխումներու, որոնց ուսումնասիրութիւնը մէկ կողմէ կարելոր է գուտ գիտական, իսկ միւս կողմէ՝ յոյժ արդիական ուսումնասիրութեան արդիւնքներու միջոցով համայնքի մէջ պարբերաբար ի յայտ եկող փոփոխութիւններուն համահունչ կշռադատուած ու նպատակամէտ որոշումներ կայացնելու գործընթացին նպաստելու առումներով:

Պէտք է նշել նաեւ այն կարելոր իրողութիւնը, որ հայ սփիւռքի տարբեր հատուածներու գիտական ուսումնասիրութիւնը ի վերջոյ միտուած է անոր համապարփակ գիտահետազօտական պատկերը ձեւաւորելուն, ուստի ինքնին կը պահպանէ բարձր գիտական կարելորութիւն:

Թեմայի ուսումնասիրման արդիականութիւնը պայմանաւորուած է ԱՄԷ-ի հայկական համայնքին մէջ տեղի ունեցող անընդհատ զարգացումներով, որոնք համայնքի պատկերը մեծապէս կը փոփոխեն կարճ ժամանակահատուածներու մէջ: Նման ուսումնասիրութիւնը կը լուծէ, ի թիւս գիտական հիմնախնդիրներու, համայնքէն ներս տեղի ունեցող փոփոխութիւնները արձանագրելու, անցեալ եւ ներկայ գործընթացներու միջեւ պատճառեւտեւանքային կապերը բացայայտելու եւ ապագային որոշակի զարգացումներ կանխատեսելու խնդիրները:

Հայկական համեմատաբար նոր ձեւաւորուած համայնքներու ձեւաւորման եւ զարգացման պատմութեան շարադրումը ունի նաեւ ճանաչողական մեծ արժէք: ԱՄԷ-ի հայութեան առումով շեշտադրելի է այն, որ սոյն ատենախօսութիւնը ընթերցող

հանրութեանը կը ներկայացնէ քանի մը տասնամեակ առաջ ձեւաւորուած պետութեան մէջ հայերու հաստատման, որպէս համայնք ձեւաւորման ու կայացման գործընթացը, ղեկավարման համակարգը կամ մեխանիզմները եւ արդի փուլի մարտահրաւերները բացայայտելով նորաստեղծ հայկական համայնքի ամբողջական նկարագիրը:

20-րդ դարասկիզբին աշխոյժ զարթոնքով կազմակերպուած ԱՄԷ-ի հայ համայնքային կեանքի մտաւորական եւ գործօն տարրերու մասին, այս աշխատասիրութիւնը վաւերագրում կոչելով ատաղձ կը դառնայ ժամանակի Էմիրութիւններու էթնիկ հայերու պատմագրութեան համար: Գաղութային կեանքի մասին բազմերախտ գրիչներու գործեր կամ ուսումնասիրութիւններ լոյս տեսած չեն, հետեւապէս սոյն աշխատանքը ԱՄԷ-ի 45-ամեայ սփիւռքեան տարեգրական պատմութեան մասին առաջին համապարփակ ուսումնասիրութիւնն է իր արդիական վերլուծումներով:

Ատենախօսութեան նպատակն ու խնդիրները: Հետազոտութեան հիմնական նպատակն է մանրակրկիտ ուսումնասիրել եւ լուսաբանել 20-րդ դարավերջէն սկսեալ նոր ձեւաւորուած ԱՄԷ-ի հայ համայնքի հասարակական-քաղաքական կեանքը:

Աշխատանքին մէջ առաջադրուած են հետեւեալ հետազոտական խնդիրները.

1. ուսումնասիրել (ԱՄԷ) հայ համայնքի հիմնադրման պատմութիւնը՝ այն քննութեան առնելով ԱՄԷ-ի մէջ ազգային փոքրամասնութիւններու իրաւունքներու բնագիրին մէջ,

2. վերլուծել Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դերը ԱՄԷ հայ համայնքային կեանքի մէջ եւ համայնքային կառոյցներու ձեւաւորման մէջ, թեմի ձեւաւորումը, ինչպէս նաեւ Քուէթի եւ Օոցի երկիրներու Ազգային վարչութիւններու կառոյցի կազմութիւնը,

3. բացայայտել ՀՀ-ԱՄԷ յարաբերութիւններուն մէջ ԱՄԷ-ի հայ համայնքի դերը, լուսաբանել ԱՄԷ-ի հայ համայնքի աջակցութիւնը ՀՀ-ին եւ Արցախին, ինչպէս նաեւ ԱՄԷ-ի հայ համայնքի եւ ՀՀ դեսպանութեան համագործակցութիւնը,

4. քննութեան առնել հայկական ինքնութեան պահպանման խնդիրները, տեղի հայերու ինքնութեան առանձնայատկութիւնները, անոնց գաղափարական պատկանելիութիւնները եւ ինքնութեան պահպանման մեխանիզմներն ու ծրագիրները,

5. լուսաբանել ԱՄԷ-ի հայ համայնքի մշակութային կեանքի առանձնայատկութիւնները 21-րդ դարասկիզբին ներկայացնելով ԱՄԷ-ի հայ համայնքի մշակութային կեանքի հիմնական դերակատարները եւ անոնց իրականացուած միջոցառումները եւ ձեռնարկները,

6. ի մի բերել ու ներկայացնել ԱՄԷ-ի հայ համայնքի զարգացման արդի փուլի առանձնայատկութիւնները՝ յատկապէս ուշադրութեան ներքոյ պահելով համայնքի ներքին զարգացումները եւ դէպի ԱՄԷ հայերու ներգաղթի միտումներն ու արտագաղթի պատճառներն ու իրողութիւնները:

7. հետազօտել հայերու սփիւռքացման եւ համարկման առանձնայատկութիւնները ԱՄԷ-ի մէջ, վեր հանելով գոյութիւն ունեցող խոչընդոտները:

Ատենախօսութեան ժամանակագրական եւ աշխարհագրական շրջանակները: Ատենախօսութեան ժամանակագրական սահմանները կ'առնչուին ԱՄԷ-ի պատմութեան ողջ ընթացքին՝ 1970-էն մինչեւ մեր օրերը, իսկ տարածական սահմաններուն մէջ ընդգրկուած են Շարժայի, Տուպայի եւ Ապու Տապիի Էմիրութիւններու հայութիւնը:

Ատենախօսութեան մեթոտարանութիւնը: Ուսումնասիրութիւնը կատարուեր է վերլուծական (վերլուծական-համադրական) մեթոտով, որու շնորհիւ իրականացուած է սկզբնաղբիւրային եւ գիտահետազօտական գրականութեան հաւաքագրում, համակարգում, քննական վերլուծութիւն եւ ամփոփում: Կիրառուած են նաեւ պատմանկարագրողական, պատմահամեմատական եւ համակարգային քննութեան մեթօտները: Հետազօտութեան համար հիմք ծառայած են սփիւռքի եւ ինքնութեան առընչուող տեսութիւնները:

Ատենախօսութեան գիտական նորոյթը: Քանի որ ԱՄԷ-ի հայ համայնքի առընչուող անցեալին շատ քիչ ուսումնասիրութիւններ եղեր են, այն ալ՝ առանձին խնդիրներու առընչուող եւ ոչ ամբողջական, համայնքի պատմութեան ողջ ընթացքը եւ հասարակական-քաղաքական կեանքի բոլոր ոլորտներն ընդգրկող գիտական հետազօտութիւնը ըստ էութեան գիտական նորոյթ է իր ամբողջութեան մէջ:

Իսկ մասնաւորաբար գիտական նորոյթ կը հանդիսանան ԱՄԷ-ի մէջ հայերու հաստատման, համայնքային կեանքի եւ ազգային կառոյցներու ձեւաւորման, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տեղական թեմի հիմնադրման, դէպի ԱՄԷ հայերու ներգաղթի եւ այնտեղի տեղի ունեցող արտագաղթի, ԱՄԷ-ի հայութեան կրթամշակութային կեանքի եւ էթնիկ ինքնութեան պահպանութեան խնդիրներու քննութեանն առընչուող հատուածները:

Աղբիւրներու եւ գիտահետազօտական գրականութեան տեսութիւն: ԱՄԷ-ի հայութիւնը իբրեւ գաղութ կազմակերպելու եւ ազգային-եկեղեցական կեանքի զարգացման մասին, ինչպէս նաեւ ԱՄԷ-ի համայնքի կրօնական, դաստիարակչական, մշակութային կեանքի հոգեւոր առաջնորդութեանը ուղղուած Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան քայլերու լուսաբանման համար կարեւոր են Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «ՀԱՄԿ» պաշտօնական ամսագրի սկզբնաղբիւրային տունաւերը¹:

ԱՄԷ-ի հայ համայնքի՝ 21-րդ դարակիզբի բոլոր կարեւորագոյն իրադարձութիւններու նկարագրութիւնը տեղ գտած է Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութեան «Հայկական սփիւռք» կոչուող տարեգիրքերուն մէջ²: Յատկապէս արձանագրուած է 2008-2016 թթ. անցուդարձը՝ հնարաւորութիւն տալով ուսումնասիրողին իրադարձային վերլուծութեան ճամբով լուսաբանելու համայնքային կեանքի զարգացման հիմնական ուղղութիւնները:

ԱՄԷ-ի հայ համայնքի պատմութեան եւ տեղի ունեցած կարեւոր իրադարձութիւններու արձանագրման եւ լուսաբանման տեսանկիւնէն սկզբնաղբիւրային

¹ Տե՛ս «Հասկ» պաշտօնական ամսագիր կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, ԿԴ. Տարի, 1995, թիւ 3-4-5 մարտ-ապրիլ-մայիս:

² Տե՛ս «Հայկական սփիւռք» տարեգիրքեր, Երեւան, 2009, 2010, 2012, 2013, 2015:

մեծ արժեք կը ներկայացնեն նաև «Դեպի երկիր» պատանեկան պարբերաթերթը³, «Շեփոր» լրատուն⁴, «Թերակղզի» պարբերաթերթը⁵:

ԱՄԷ-ի մէջ ՀՀ դեսպանութեան բացման գործին մէջ տեղի հայ համայնքի աջակցութեան, բերած նպաստի, ԱՄԷ-ՀՀ յարաբերութիւններու զարգացման մէջ համայնքի ունեցած դերի մասին արժեքաւոր է Ա. Փոլադեանի «Երկկողմ յարաբերութիւններ՝ տնտեսական եւ առեւտրային» 2002 թ. արաբերէն գիրքը⁶, որը ունի մէկ կողմէ սկզբնաղբիւրային արժեք, իսկ միւս կողմէ գիտավերլուծական նշանակութիւն:

ԱՄԷ-հայ համայնքի պատմութեան որոշ հիմնահարցերու ուսումնասիրութեան տեսանկիւնէն խիստ շնորհակալ գործ կատարած է Շ. Աշըգեանը: ԱՄԷ-ի Ազգային վարչութիւններու եւ համայնքի ձեւաւորման, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ օժման 10-ամեակի եւ գաղութի պատմութեան մասին յիշատակելի է անոր «Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց մէջ» գիրքը, որ նախաձեռնութիւն էր Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց Ազգային վարչութեան: Գիրքին մէջ տեղ գտած են Քուէյթի ազգային առաջնորդանիստի եւ Հիւսիսային Էմիրութեանց վարչութեան ատենագրութիւնները⁷, հիմնականօրէն մէջբերումներ կատարած է համայնքի հետ առընչուող փաստաթուղթերը՝ համայնքային կեանքի լուսաբանումը թողնելով այլ հետազոտողներուն:

Արդի պատմագիտական-տեսական քննախօսութեան ծիրէն արժեքաւոր է Շարժայի կառավարիչ Շէյխ դոկտոր Սուլթան Պին Մուհամմէտ ալ-Քասիմի իր «Սարտ ալ-Ձաթ» խորագրեալ գիրքին մէջ ներս 13-րդ դ. հայերու ներկայութեան եւ ԱՄԷ-ի մէջ հիմնադրած բնակավայր Ջուդա կամ Ճուլֆար պատմական իրողութեան հաստատումը⁸:

ԱՄԷ-ի հայ համայնքի արդի շրջանի պատմութեան ուսումնասիրութեան տեսանկիւնէն յատկանշական է Ա. Փաշայանի եւ Լ. Հարությունյանի «Օնցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ» աշխատութիւնը, ուր ի թիվս այլ համայնքներու կը ներկայացուին ԱՄԷ-ի հայ համայնքը արդի հիմնախնդիրները⁹:

ԱՄԷ-ի հայ համայնքի պատմութեան ուսումնասիրութեան տեսանկիւնէն ուշագրաւ է Պէյրութի մէջ անցկացուած «Օնցի արաբական երկիրներու հայերը» խորագրով

³ «Դեպի երկիր» պատանեկան պարբերաթերթը հայատառ առաջին տպագիր մամուլն է ԱՄԷ-ի մէջ: Անկէ հրատարակուած է երեք թիւ 1992-ին: Աշըգեան Շ., Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց մէջ, ԱՄԷ-ի Ազգային Վարչութիւն, 2008, էջ 128:

⁴ «Շեփոր» լրատուն Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց տարբեր տարիներու ազգային վարչութիւններու տեղակատուն է: Առաջին թիւը (28 էջ) լոյս տեսած է 26 հոկտեմբեր 1999-ին: «Շեփոր»ին լոյս ընծայումը դադրած է 2005-ին: Աշըգեան Շ., նշվ. աշխ., էջ 128-130:

⁵ «Թերակղզի» մշակութային եւ հասարակական հայելի տպագիր ու գունաւոր պարբերաթերթը 2000-ին, անհատական ձիգերով լոյս տեսած է շրջան մը Ապու Տապի հաստատուած երկրաչափ-ճարտարագէտ Գուրգէն Մանկասարեանի խմբագրութեամբ: «Թերակղզի»ին լոյս ընծայումը դադրած է խմբագրին երկրէն մեկնելու պատճառով:

⁶ Sté u 54 م، ٢٠٠٤ الشارقة العلاقات الأرمنية العربية صفحة ١. بولاديان

⁷ Sté u Աշըգեան Շ., նշվ. աշխ.:

⁸ Sté u Doctor Sheikh Sultan al-Qasimi's (Sard al-zat) entitled book published in Arabic in the year 2009. <https://sheikhsultan.ae/Portal/en/official-positions/historical-works.aspx#page=4>.

⁹ Sté u Հարությունյան Լ., Փաշայան Ա., Օնցի արաբական երկրների հայ համայնքները. Արդի հիմնախնդիրներ, ՀՀ Սփիւռքի նախարարութիւն, Երեւան, 2012:

գիտաժողովի նիւթերու ժողովածուն¹⁰: Ժողովածոյին մէջ տեղ գտած են նաեւ ԱՄԷ-ի հայ համայնքին առընչուող զեկուցումներ:

Համայնքի ձեւաւորման ու զարգացման ընթացքի, ինչպէս նաեւ համայնքային որոշ կառոյցներու բազմամեայ արդիւնաւէտ գործունէութեան լուսաբանման համար օգտագործուել են նաեւ տարաբնոյթ այլ արխիւային նիւթեր, յուշամատեններ եւ տարեգիրքեր¹¹:

Ատենախօսութեան շարադրման համար կարելո՞ր նշանակութիւն ունեցեր են նաեւ շարք մը գիտական բարձրարժէք հետազօտութիւններ¹²:

ԱՄԷ-ի հայ համայնքի պատմութեան եւ յարակից հիմնահարցերու առընչութեամբ առկայ գիտական ուսումնասիրութիւններու քննութիւնը ցոյց կու տայ, որ թէև համայնքի պատմութեան որոշ հիմնահարցեր քննութեան նիւթ դարձեր են տարբեր հետազօտողներու կողմէ, սակայն անոր ձեւաւորումը եւ կայացումը, համայնքի հասարակական-քաղաքական եւ կրթամշակութային կեանքի ամբողջական ուսումնասիրութիւնը ցարդ կը սպասէր իր ուսումնասիրողին:

Ուսումնասիրութեան փորձաքննութիւնը: Ատենախօսութեան թեման հաստատուել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի գիտական խորհուրդի մէջ: Քննարկուել են հրապարակային պաշտպանութեան երաշխաւորուել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի Հայոց պատմութեան ամպլիոնը: Ատենախօսութեան հիմնական արդիւնքները եւ դրոյթները հրապարակուել են թուով վեց գիտական յօդուածներու տեսքով:

Ատենախօսութեան կառուցուածքը: Ատենախօսութիւնը բաղկացած է ներածութիւնէ, չորս գլուխներէ, որոնցմէ իւրաքանչիւրը կազմուած է ենթագլուխներէ, եզրակացութիւնէ, առաջարկութիւններէ, օգտագործուած սկզբնաղբիւրներէ եւ գրականութեան ցանկէ:

Ատենախօսութեան առաջին գլուխը կը կրէ «**Հայկական համայնքի ձեւաւորման եւ կայացման գործընթացը ԱՄԷ-ի մէջ**», որ բաղկացած է չորս ենթագլուխներէ:

¹⁰ Տե՛ս Մանկասարեան Շ., Սայեղ, Ա., ԱՄԷի Հայածախի ներկայութիւնը տեղական համացանցին մէջ (համառօտ ակնարկ), ԱՄԷի հայ համացանցային մետիան, «Օնցի արաբական երկիրներու հայերը» հատոր, գիտաժողովի նիւթեր (6-7 դեկտեմբեր 2022) Հայկազեան համալսարան տպարան, Պէյրութ, 2024:

¹¹ Տե՛ս Բայբորոյան Վ., Սփիւռքահայութեան հետ կապի մշակութային կոմիտէ, հաշվետվություն Քուէթահայ գաղութ այցելելու մասին, Հայաստանի ազգային արխիւ, ֆ. 875, ց. 16, գ. 46, թ. 17; Յուշամատեն Ապու Տապիի հայկական մշակութային ընկերակցութեան 1990-2010, Կարգ Օծման Սրբոց Նահատակաց Եկեղեցոյ, Ապու Տապի, 12 դեկտեմբեր 2014, Ապու Տապի Ազգային միօրեայ վարժարան, 25-ամեակ, 1981-2006 տարեգիրք, Օհաննէսեան հայկական վարժարան, 2009-2010 տարեշրջան, տարեգիրք, Օհաննէսեան հայկական վարժարան, 30-ամեակ, 1980-2010, տարեգիրք:

¹² Տե՛ս Բայբորոյան Վ., Իրանական մետաքսի համար պայքարի ազդեցութիւնը Մերձաւոր ու Միջին Արեւելքի միջազգային յարաբերութիւնների վրայ եւ հայ Առեւտրական կապիտալը (XVII դարակիզբ), Պատմաբանասիրական հանդէս, 2019, 2 (211); Baibourian V., Participation of Iranian Armenians in the World Trade in the 17th Century, in “Les Arméniens dans le commerce asiatique au début de l’ère modern”, sous la direction de Sushil Chaudhury et Kéram Kévonian, Paris. 2008, pp. 43-48; Հովհաննիսյան Ս., Հայ առեւտրական կապիտալ իբրեւ «Աշխարհ-տնտեսություն» եւ արդյունաբերական դարաշրջանի մարտահրավերները, «ՎԷՄ» համահայկական հանդէս, հունվար-մարտ, Թ (ԺԵ) տարի, 2017, թիվ 1 (57):

Առաջին ենթագլուխին մեջ՝ «Արաբական Միացեալ Էմիրութիւններու (ԱՄԷ) հիմնադրումը եւ ազգային փոքրամասնութիւններու իրաւունքներու սահմանումը» կը մանրամասնուին ԱՄԷ-ի Ազգային փոքրամասնութիւնների Իրաւունքներու եւ այս պարագային ԱՄԷ-ի հայկական համայնքի իրաւունքներու ու կարգավիճակի տեսանկիւնէն երկրի սահմանադրութեան մէջ առկայ ազգային ու կրօնական փոքրամասնութիւններու նախատեսումները՝ օրէնքը, որ կ'արգիլէ խտրականութիւնը կրօնական համոզմունքներու հիման վրայ, որ կ'արգիլէ հայեոյանքն ու դաւանափոխութիւնը ոչ իսլամներուն կողմէն, օրէնքը, որ կը թոյլատրէ տարբեր կրօններու, ազգութիւններու եւ դաւանանքներու համար՝ կրօնական ծէսերու եւ պաշտամունքի ազատութեան եւ ԱՄԷ պետութիւնը անվճար հողեր կը յատկացնէ աղօթատեղիներու եւ եկեղեցիներու կառուցելու համար, որպէսզի մարդիկ կարողանան ազատօրէն պաշտամունք կատարեն: Կրօնական նիւթերու ներմուծումը եւ վաճառքը թոյլտուութիւնը, մահմետականներու շրջանի մէջ քրիստոնէութիւն տարածելու արգելքը, կրօնական խումբերու կրօնական գործառոյթները բացահայտօրէն գովազդելու արտօնութիւնը մամուլի մէջ, ինչպիսիք են տօնակատարութիւնները, յիշատակի տօն արարողութիւնները, կրօնական համաժողովները, երգչախմբային համերգները եւ դրամահաւաքի միջոցառումները¹³:

Երկրորդ ենթագլուխին մէջ «Հայերը ԱՄԷ-ի ապագայ տարածքին (մինչեւ 1971 թուականը). հայերու ծագումնաբանութիւնը եւ տեղաբաշխումը» կը ներկայացուին պատմական ապացոյցները, որ հայերը միջնադարէն ի վեր աշխուժօրէն ներգրաւուած եղած են տարածաշրջանային եւ միջազգային առեւտրական կապերու մէջ, մասնաւորապէս Պարսից Օցի տարածքին, որը նպաստէր է անոնց վաղ ներկայութեանը այն տարածքներուն, որոնք այժմ կը կազմեն ԱՄԷ-ը: Բացի այդ, հայերու հետքը պահպանուել է ԱՄԷ-ի մէջ, որ կ'արտացոլուի տեղանուններու մէջ, ինչպիսիք են Ջուլֆարը, ինչպէս նշած է Շարժայի կառավարիչը դոկտոր Սուլթան Պին Մոհամմետ իր «Սարտ Էլ-Ջաթ» (سرد الذات) խորագրեալ գիրքին մէջ¹⁴, որ Ջուլֆարը (Ջուղա) հայկական անուն է եւ հիմնադրուել է 13-րդ դարու սկիզբը հայերու կողմէ, որոնք փախուստ տուած էին Պարսկաստանէն մոնղոլներու արշաւանքի ժամանակ¹⁵: Կը ներկայացուին ԱՄԷ-ի տարածքին առաջին հայերու ժամանումի մանրամասնութիւնները, անոնց մասնագիտութիւնները, Օցի երկիրներուն մէջ հայկական համայնքներու ձեւաւորումը, որ սկսած է Ի. դարու երկրորդ կէսին՝ 1950-ական թուականներուն, երբ կը սկսի քարիւղի նաֆթի արդիւնաբերութիւնը, հատուկէնս հայեր կ'աշխատին քարիւղի ընկերութիւններուն մէջ, դէպի Արաբական Օցի երկիրներ եւ այս պարագային դէպի ԱՄԷ զաղթող երիտասարդներու տեղաշարժի պատճառը, «Ոսկէ վիզա» կացութեան քաղաքականութիւնը, Հայաստանէն ԱՄԷ տեղափոխուած հայերու մասին

¹³ St' u Bureau of Democracy, Human Rights and Labor (Author), 2008 Report on International Religious Freedom - United Arab Emirates, <https://www.refworld.org/docid/48d5cbf3c.html> : (Religious groups openly advertise religious functions in the press, such as holiday celebrations, memorial services, religious conventions, choral concerts, and fundraising events).

¹⁴ St' u նոյն տեղը՝ <https://sheikhdrsultan.ae/portal/ar/media-center/news/22/5/2013> 22, Մայիս 2013 :

¹⁵ St' u The city of Ras al-Khaimah was founded by Armenians, <https://www.peopleofar.com/2014/11/11/the-city-of-ras-al-khaimah-was-founded-by-armenians/> November 11, 2014 :

հարցազրույցները կ'ընդգծեն անոնց ներգրառածության մակարդակը ԱՄԷ-ի հայկական սփիւռքի համայնքէն, ԱՄԷ-ի քաղաքացիութեան սահմանափակումները, զբաղուածութեան վրայ հիմնուած բնակութեան իրաւունքի եւ երկարաժամկետ բնակութեան երաշխիքներու բացակայութեան պայմանները:

Երրորդ ենթագլուխին մէջ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերը ԱՄԷ հայ համայնքային կեանքի կայացման գործին մէջ» կը ներկայացուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հիմնարար եւ որոշիչ դերը ԱՄԷ-ի մէջ հայ համայնքի կայացման եւ կազմակերպման գործին մէջ ապահովելով հոգեւոր առաջնորդութիւն, հաստատութենական (ինստիտուցիոնալ) կառուցուածք եւ համակարգուած առաջնորդութիւն: Այս անհրաժեշտութիւնէն թելադրուած, Մեծի Տանն Կիլիկիոյ ցաթողիկոսութիւնը կը ստանձնէ այս փոքրիկ գաղութներուն կրօնական, դաստիարակչական, մշակութային կեանքի հոգեւոր առաջնորդութիւնը, այնտեղ եկեղեցական, կրօնական պատասխանատու անձնաւորութիւններ առաքելով: Սկզբնական շրջանին գաղութի կաթողիկոսական փոխանորդի հոգեւոր հովութեան կազմակերպչական գործունեութիւնը, ԱՄԷ-ի ձեւաւորուած համայնքը հաստատապէս կայունացնելու ու զարգացնելու աշխատանքներուն մէջ կ'ընդգծուին ազդեցիկ ազգայիններու (բարերարներու) պատրաստակամութիւնը, Հայր Սուրբը տեսկցութիւն կ'ունենայ Շարժայի Շէյխին՝ Սուհամէտ էլ Քասիմիի անձնական խորհրդականին՝ Ապտալլահ Ճումաա Մութաուայի հետ, (Շէյխը գործով կը բացակայէր երկրէն), եւ կը խօսի հայութեան համար հաւաքավայր մը ունենալու մասին¹⁶: Ազգային վարչութիւններու նշանակումը Շարժա-Տուպայի եւ Ապու Տապիի մէջ եւ անոնց ձիգերով համայնքներէն ներս ազգային-մշակութային կեանքի կազմակերպումը,

Չորրորդ ենթագլուխին մէջ՝ «Դէպի ԱՄԷ հայերու ներգաղթը, արտագաղթի միտումները եւ ասոր նպաստող պատճառները արդի փուլի մէջ» կը քննարկուի դէպի ԱՄԷ հայ երիտասարդներու եւ ընտանիքներու ներգաղթի շնորհիւ կը ձեւաւորուին հայկական 2 համայնք՝ Շարժայ-Տուպայ եւ Ապու Տապիի: Հայերու ներգաղթը դէպի ԱՄԷ շարժունակութիւնը (տինամիքը) տնտեսապէս պայմանաւորուած, կը բնութագրուի անընդհատ ներգաղթով եւ արտագաղթով (ներհոսքով եւ արտահոսքով), ժամանակաւոր բնակեցման ձեւերով եւ սփիւռքէ-սփիւռք շարժունակութեամբ: Կը ներկայացուին արտագաղթի ու ներգաղթին նպաստաւոր պատճառները, որ կ'ընդգծեն ԱՄԷ-ի հայկական սփիւռքի (տինամիք) շարժուն եւ մշտապէս զարգացող բնոյթը շնորհիւ տնտեսական հնարաւորութիւններու, քաղաքականութեան փոփոխութեան եւ անձնական ընտրութեան վրայ:

Ատենախօսութեան երկրորդ գլուխը «ԱՄԷ-ի հայ համայնքի կառուցուածքը եւ հասարական-քաղաքական ու մշակութային կեանքի առանձնայատկութիւնները» բաժնուած է չորս ենթագլուխներու:

Առաջին ենթագլուխին մէջ՝ «Համայնքի կազմակերպակառուցուածքային պատկերը» քննարկուած է ԱՄԷ-ի համայնքի կազմակերպչական եւ կառույցներու ձեւաւորման գործընթացը եւ համայնքէն ներս պահպանելու եւ ամրապնդելու հայ ինքնութիւնը:

¹⁶ Տե՛ս Պատմական ակնարկ Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց հայ գաղութի մասին, <https://emahay.com>, 30 նոյեմբեր 2016:

Կաթողիկոսությունը իբրև առաջին քայլ պարբերաբար ԱՄԷ կը դրկէ եկեղեցականներ¹⁷: Դեկտեմբեր 1979-ին, Գերպ. Տ. Օշական Վրդ. Չօլոյեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ կը դրկուի Քուէլթ ու ԱՄԷ Շարժայ տեղւոյն վրայ ծանօթանալու համար գաղութը կազմակերպելու կարելիութիւններուն¹⁸: 1979 հայ ազգային կեանքը կազմակերպելու նպատակով ան կը նշանակէ Շարժայ-Տուպայի եւ Ապու Տապիի առաջին Ազգային վարչութիւնները: Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսը 15 մարտ 1980-ի թուակիր նամակով (144/80) կը պաշտօնականացնէ վարչութիւնը¹⁹, իսկ Ապրիլ 1980-ին Հոգ. Տ. Օշական Վրդ. Չօլոյեանը կը նշանակէ Քուէլթի եւ Օնցի երկիրներուն կաթողիկոսական փոխանորդ: Հիմնական այս իրադարձութիւնները նկատի առած գաղութի հիմնադրման թուական ընդունուած է 1980-ը: 1980-էն ասդին մինչև 2006 թուական ԱՄԷ-ի տարածքին կը գործեն իրարմէ անջատ, իրարու հետ գործակցող երկու (2) Ազգային վարչութիւն. մէկը Հիւսիսային Էմիրութիւններու մէջ (Շարժա-Տուպայ), իսկ միւսը Ապու Տապի: Այսօր Ազգային կեանքը կը ղեկավարուի թեմական կառոյցով, որուն կը նախագահէ Առաջնորդ Սրբազան Հայրը²⁰:

Երկրորդ ենթագլուխին մէջ՝ «**Հայ համայնքային կեանքի զարգացման ու կայացման հիմնական փուլերը ԱՄԷ-ի մէջ**» կը ներկայացուին Շարժա-Տուպայի Ազգային վարչութեան գործունէութիւնը հիմնական գիծերով ստորեւ կը ներկայացուի որոշակի պարբերացմամբ հաշուի առնելով առանձին ժամանակային փուլերուն համայնքի կեանքէն ներս տեղի ունեցող կարեւորագոյն փոփոխութիւններն ու Ազգային վարչութեան գործունէութեան մէջ նոր իրողութիւններու ի յայտ գալը եւ իրականացրած ծրագրերուն մէջ նոր ձեռնարկներու նախաձեռնելը: Իրաւական տեսակետէն հայ համայնքը պետական ճանաչում չունէր: Ազգային վարչութիւնը, սուրբէնը եւ հոգաբարձութիւնը կ'աշխատին լուծում մը գտնել հարցին: 1996 – 1998 թթ. Ազգային վարչութեանց տարեշրջանին, Շարժայի կառավարիչ դոկտ. Շէյխ Մուլթան Պին Մոհամմէտ Ալ-Քասիմի ընդառաջելով Գարեգին Բ. Կաթողիկոսի խնդրանքին, պաշտօնական նամակով 1996 թ. ապրիլ 16-ին հայ համայնքին կը յատկացնէ հողակտոր մը եկեղեցի կառուցելու արտօնութեամբ, որը կ'ապահովէ հայ համայնքի պաշտօնական ճանաչումը²¹: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներքոյ երկու Ազգային վարչութիւններու վաղ նշանակումը եւ հետագային պաշտօնականացումը ԱՄԷ-ի հայ համայնքին ապահովեց էական կառուցուածք եւ շարունակականութիւն: Հիմք դրաւ կազմակերպուած համայնքային կեանքի, որ հետագային վերածուեցաւ թեմական համակարգի՝ ապահովելով հայ համայնքի աւելի կայուն, համակարգուած եւ կայուն կառավարում: Կը ներկայացուին Ազգային վարչութեան հովանիին տակ գործող շարք մը յանձնախումբեր եւ խորհուրդներ:

Երրորդ ենթագլուխին մէջ՝ «**ԱՄԷ-ի հայ համայնքի մշակութային կեանքը 21-րդ դարակիզբին**» կ'ընդգծուի, որ ԱՄԷ-ի մէջ քաղաքական հասարակութիւն հայրենակցական կամ մշակութային միութիւններ չկան ու չեն կարող ստեղծուիլ. ի

¹⁷ Տե՛ս «Հասկ» պաշտօնական ամսագիր կաթողիկոսական Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, ԿԴ. Տարի 1995, թիւ 3-4-5 մարտ-ապրիլ-մայիս, էջ 157:

¹⁸ Տե՛ս «Հայ սփիւռք» հանրագիտարան, էջ 98: Տե՛ս նաեւ Աշըգեան Շ., նշվ. աշխ., էջ 29:

¹⁹ Տե՛ս Աշըգեան Շ., նշվ. աշխ., էջ 30:

²⁰ Արաբական Միացեալ Էմիրութեանց հայ գաղութի պատմութիւն. - <https://emahay.com>.

²¹ Տե՛ս Աշըգեան Շ., նշվ. աշխ., էջ 58:

տարբերություն այլ սփիռքի համայնքներուն, ուր քաղաքացիական հասարակութիւն հասկացութեան մէջ մենք ունինք կուսակցութիւնները, միութիւնները: Կը ներկայացուին ԱՄԷ-ի հայ համայնքէն ներս նշանակալից մշակութային գործունէութիւն տարած Ապու Տապիի մէջ հիմնուած տեղական կազմակերպութիւն «Ապու Տապիի հայկական մշակութային ընկերակցութիւն»-ը²² 1990-2010 թթ., եւ համահայկական կազմակերպութիւններ «Հայ օգնութեան միութիւնը» 2010-2017 թթ. եւ «Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւնը»²³ 2011-2017 թթ., որոնք ծառայելով որպէս համայնքի հոգեւոր եւ մշակութային սիրտ՝ կը կազմակերպեն մշակութային միջոցառումներ, հասարակական հաւաքներ, դասախօսութիւններ, հոգեւոր խորհրդածութիւններ եւ լսարաններ՝ շարքական դրութեամբ աստուածաշնչական սերտողութիւններ, որոնք կ'ամրապնդեն համայնքային կապերը: Ապու Տապիի հայկական ընկերակցութեան նախաձեռնութիւնները ոչ միայն կը տօնէր հայկական արուեստը, այլեւ կը խթանէր բարի կամքը, մշակութային փոխանակումը եւ իրազեկութիւնը՝ ցոյց տալով, թէ ինչպէս գեղարուեստական նախաձեռնութիւնները կարող են անցնիլ աշխարհագրական եւ մշակութային սահմանները: ՀՕՄ-ի Շարժա-Տուպայի մասնաճիւղը կարեւոր դեր ունեցեր է համայնքային համախմբուածութեան եւ մշակութային շարունակականութեան ամրապնդման գործին մէջ՝ հասարակական, կրթական եւ բարեգործական նախաձեռնութիւններու միջոցով՝ աջակցելով կանանց, երիտասարդներուն եւ ընտանիքներուն, խթանելով հայկական ասանդոյթներն ու արուեստը, ինչպէս նաեւ խթանել համերաշխութեան եւ հաւաքական ինքնութեան զգացումը ԱՄԷ հայ համայնքէն ներս: Համազգայինը իր ընթացիկ գործօն տարիներուն զգալիօրէն հարստացուցած է ԱՄԷ-ի հայ համայնքի մշակութային կեանքը՝ խթանելով գրականութիւնը, արուեստը եւ մտաւորական գործունէութիւնը՝ ամրապնդած է մշակութային ինքնութիւնը, աջակցած է խթանած է համայնքային համախմբուածութիւնը՝ թողնելով երկարատեւ ազդեցութիւն մինչեւ իր գործունէութեան դադարումը:

Չորրորդ ենթալուսին մէջ՝ **«Հայկական մշակութային միջոցառումները ԱՄԷ-ի մէջ (ազգային փոքրամասնութիւններու մշակութային իրաւունքներու բնագիրին մէջ»** կը ներկայացուին ԱՄԷ-ի հայ համայնքի կեանքէն ներս մեծ տեղ ունին հանրային-մշակութային միջոցառումները, որոնց պարբերական եւ անընդհատ կազմակերպման համար ջանքեր են ի գործ դրած համայնքի ազգային կառոյցները՝ յընթացս ստանալով տեղական իշխանութիւններու հաւանութիւնն ու աջակցութիւնը: ԱՄԷ-ի մէջ բազմաթիւ են մշակութային փառաստօները, որոնք կը հռչակեն իր բազմազան բնակչութեան մշակութային ժառանգութիւնը: Շարժայի ժառանգութեան ամենամեայ օրերը եւ Տուպայի միջազգային շարժարուեստի փառաստօնը նշանաւոր օրինակներ են, ուր ցուցադրուած է հայկական մշակոյթը: 2001 թ. մարտ 24-29-ին, ԱՄԷ-ի մէջ ՀՀ դեսպանութեան եւ Ապու Տապիի Մշակոյթի կեդրոնի համատեղ ջանքերով «Ապու Տապիի Մշակոյթի կեդրոն»ի մեծ սրահին մէջ բացուեցաւ հայ կիրառական արուեստի ցուցահանդէսը

²² Տե՛ս նաեւ Յուշանատեան Ապու Տապիի հայկական մշակութային ընկերակցութեան 1990-2010, էջ 14:

²³ Տե՛ս նաեւ ՀՕՄ-ի եւ Համազգայինի իրականացուցած մշակութային միջոցառումները, էջ 165, Յաւելուած թիւ 7:

«Հայկական մշակոյթի շաբաթը Ապու Տապիի մէջ» խորագրի ներքոյ: Այս իւրայատուկ ձեռնարկը կը հովանաւորէր երկրի նախագահի որդին՝ Տեղեկատուութեան եւ մշակոյթի նախարար Ն. Գ. Շէյխ Ապտալլա պրն Զայետ ալ-Նահիանը²⁴: Նշենք նաեւ որ ցուցահանդէսի կազմակերպմանը մեծապէս աջակցեր էր նաեւ ՀՀ մշակոյթի նախարարութիւնը: Մշակութային ժառանգութեան փառատօները կ'ամրապնդեն ԱՄԷ-ի դերը որպէս մշակութային երկխօսութեան համաշխարհային կեդրոն՝ միաժամանակ խթանելով հանդուրժողականութիւնը եւ միջմշակութային փոխանակումը: Միեւնոյն ժամանակ, այդ բոլորը ԱՄԷ-ի հայկական համայնքին կ'ապահովեն հաստատութենական (ինստիտուցիոնալ) տեսանելիութեամբ, հնարաւորութիւններ՝ պահպանելու եւ ներկայացնելու իրենց ժառանգութիւնը, ինչպէս նաեւ հարթակ ԱՄԷ-ի բազմազան հիւսուածքին մէջ աւելի խորը համարկման եւ համայնքային համախմբուածութեան համար: Այս բոլորի իրականացումը նպաստեց հայ համայնքին եւ ԱՄԷ-ի միջեւ բարեկամութեան զարգացմանն ու փոխըմբռնման խորացման գործին մէջ, ինչպէս նաեւ ԱՄԷ-ի արաբ ժովուրդին ծանօթացնելու հայկական անցեալ դարերու եւ ժամանակակից մշակոյթին, հասարակական կեանքին:

Ատենախօսութեան երրորդ գլուխը «ԱՄԷ-ի հայ համայնքի դերը ՀՀ-ԱՄԷ յարաբերութիւններուն մէջ» բաժնուած է երկու ենթագլուխներու:

Առաջին ենթագլուխին մէջ **«Հայաստանի Հանրապետութեան ԱՄԷ-ի հետ դիւանագիտական ու տնտեսական յարաբերութիւններու զարգացման ընթացքը եւ ԱՄԷ-ի հայ համայնքի դերակատարութիւնը ՀՀ-ԱՄԷ- յարաբերութիւններու զարգացման գործին մէջ»** կը ներկայացուի ԱՄԷ-ի հայ համայնքի աջակցութիւնն ու մասնակցութիւնը, որ ըմբռնեց նշանակութիւն ունեցաւ Ապու Տապիի մէջ Հայաստանի դեսպանութեան ստեղծման գործին մէջ, նշելով անոր կարեւորութիւնը Օղջի տարածաշրջանին մէջ: Կ'ընդգծուի, որ 1998-ին դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումէն ի վեր, Հայաստան-ԱՄԷ համագործակցութիւնը վերածուեց է տինամիք եւ բազմակողմանի գործընկերութեան, որ կը ներառէ տնտեսական, ենթակառուցուածքային եւ մշակութային ոլորտներ: Բարձր մակարդակի ներդրումային նախաձեռնութիւնները եւ հաստատութենական համագործակցութիւնը, յատկապէս՝ Ապու Տապիի զարգացման հիմնադրամի նման կազմակերպութիւններու հետ, զգալիօրէն նպաստած են Հայաստանի զարգացման ծրագրերուն, այդ թուով՝ Արփա-Սեւան թունելի կառուցմանը²⁵: Միեւնոյն ժամանակ, աճող առեւտրային, գործարար ֆորումները եւ ներդրումային համաձայնագրերը, որոնց աջակցեր են երկրի ղեկավարները, որմով ալ կ'ընդգծուին երկկողմ յարաբերութիւններու ընդլայնող շրջանակը եւ գործընկերութիւնը՝ ապագայ տնտեսական համագործակցութեան խոստումնալից հեռանկարներով: Ի աջակցութիւն ԱՄԷ-ի եւ Հայաստանի հայ-արաբական բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման՝ Հադարծին վանքը վերականգնուած է 2013-ին, Շարժայի Գերագոյն խորհրդի անդամ եւ կառավարիչ Ն. Մ. Շէյխ ղոկտոր Սուլթան պին Մուհամմատ ալ

²⁴ Տե՛ս Հայկական մշակոյթի շաբաթը ԱՄԷ-ում (մարտ 24-29 2001 թ.), ԱՄԷ-ի «Շեփոր» լրատու ապրիլ 2001, թիւ 13, էջ 15:

²⁵ Վարչապետը ծանօթացել է «Արփա-սեւան» թունելի հիմնանորոգման աշխատանքների ընթացքին, <https://www.gov.am/am/news/item/12212/>, 6 նոյեմբերի 2015 (մուտք՝ 01.04.2024):

Քասիմիի աջակցութեամբ²⁶: ԱՄԷ-ի հայ համայնքը վճռորոշ է կազմակերպուած դեր խաղցած է Հայաստանի դեսպանատան հիմնադրման գործին մէջ՝ տրամադրելով ֆինանսական, կառուցային կամ հաստատութենական եւ բարոյական աջակցութիւն: Սա ցոյց կու տայ համայնքի ուժեղ ազգային նուիրումները եւ անոր կարողութիւնը՝ աշխուժօրէն նպաստելու պետականաշինութեան ջանքերուն եւ ՀՀ-ԱՄԷ դիւանագիտական յարաբերութիւններու ամրապնդմանը: ԱՄԷ-ի հայ համայնքը մեծապէս օգնէր է նաեւ ՀՀ-ին ու Արցախին, ինչպէս նաեւ երկրաշարժէն տուժած հայութեանը: Կարող ենք արձանագրել, որ ԱՄԷ-ի հայ համայնքը անցեալ տասնամեակներուն ձեւաւորած է ՀՀ-ի հետ համագործակցութեան մեծ փորձ, որու շնորհիւ ներկայիս ալ կը շարունակէ մնալ ՀՀ-ի եւ ԱՄԷ-ի մէջ ՀՀ դեսպանութեան յուսալի գործընկերը:

Երկրորդ ենթադրութիւն մէջ «ԱՄԷ-ի հայ համայնքի աջակցութիւնը Հայրենիքին եւ վտանգուած սուրիահայերուն» կ'ընդգծուի, որ ձեւաւորման եւ կայացման ճանապարհի ողջ ընթացքին ԱՄԷ-ի հայ համայնքն իր աջակցութիւնը տրամադրած է Հայաստանի Հանրապետութեանն ու Արցախին: ԱՄԷ-ի հայ համայնքը նշանակալի եւ հետեւողական դեր խաղցած է Հայաստանին եւ Արցախին՝ մարդասիրական օգնութեան, ֆինանսական ներդրումներու եւ զարգացման նախաձեռնութիւններու միջոցով²⁷: 2016-2017 տարիներուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ եւ ֆինանսատրամբ Արցախի մէջ «Նոր Կիլիկիա» անունով գիւղ մը՝ բնակավայր մը հաստատուեցաւ իր նորակառոյց բնակարաններով եւ անհրաժեշտ կառոյցներով ու յարմարութիւններով²⁸: Հակառակ անոր որ համեմատաբար փոքր եւ նորաստեղծ հայ համայնք ըլլալուն, այն ցուցաբերած է ուժեղ ազգային համերաշխութիւն եւ նուիրումները՝ աշխուժօրէն նպաստելով հայրենիքի վերականգնմանը, օգնութեան ջանքերուն եւ երկարաժամկէտ զարգացմանը: Այս բոլոր գործունէութիւնը կ'ընդգծէ հայ համայնքի աշխուժ եւ բազմակողմանի աջակցութիւնը՝ համատեղելով մարդասիրական օգնութիւնը, մշակութային նախաձեռնութիւնները եւ միջազգային համերաշխութիւնը: ԱՄԷ-ի հայ համայնքի ջանքերը ոչ միայն նպաստած են Արցախի եւ Հայաստանի զարգացմանը, այլեւ տարածուեր են ճգնաժամի մէջ գտնուող այլ հայկական համայնքներու աջակցութեան վրայ՝ ամրապնդելով միասնութեան եւ հաւաքական պատասխանատուութեան ուժեղ գրագումը սփիւռքի մէջ:

²⁶ ودعمًا لتعزيز العلاقات الودية الأرمنية العربية، تم ترميم دير هاغارتسين في عام 2013 بدعم من عضو المجلس الأعلى لدولة الإمارات العربية المتحدة، حاكم الشارقة سمو الشيخ سلطان بن محمد القاسمي. تقديم الثقافة الأرمنية للأجانب في مهرجان "أيام الشارقة التراثية"، Հայկական մշակույթը օտարերկրացիներուն ներկայացնելը «Շարժայի ժառանգութեան օրեր» փառատօնին, 14 մարտ 2022, Ar.armradio.am, <https://tinyurl.com/bk8s4kbr>. Արաբ մուսուլման շեյխը «կը փրկէ» Հայաստանի հնագոյն վանքը, բարերար Շարժայի կառավարիչը Annahar.com, 03 դեկտեմբեր 2013, <https://tinyurl.com/2h5rhhzj>, Հայաստանի արքեպիսկոպոսը բարձր կը գնահատէ Շարժայի կառավարիչի աջակցութիւնը Հաղարծին վանքի վերականգնումին, رئيس أساقفة أرمينيا يشيد بدعم حاكم الشارقة، <https://tinyurl.com/samrbf2n>, 17 յունուար 2024:

²⁷ Sté u «Հայկական սփիւռք» տարեգիրք, Երեւան, 2010, էջ 228:

²⁸ Արցախի Նոր Կիլիկիա գիւղի կառուցման աշխատանքները կը մօտենան իրենց աւարտին, <https://horizonweekly.ca/fr/88200-2/> 20.06.2016:

Ատենախօսութեան չորրորդ գլուխը «ԱՄԷ-ի հայ համայնքի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանութեան հիմնահարցերը» բաժնուած է չորս ենթագլուխներու:

Առաջին ենթագլուխին մէջ **«ԱՄԷ-ի հայկական համայնքի զարգացման արդի փուլի առանձնայատկութիւնները»** կը ներկայացուին 21-րդ դարու սկիզբը ԱՄԷ-ի հայ համայնքի ազգային-մշակութային կեանքին մէջ տեղի ունեցող անցումարձի իրադարձային վերլուծութիւնը, որ կը յստակեցնէ արդի զարգացումները համայնքէն ներս եւ համայնքային կեանքի զարգացման արդի միտումները: Հակիրճ իրադարձային վերլուծութիւնը՝ ԱՄԷ-ի հայ համայնքին մէջ տեղի ունեցող 2012-2014 թթ. եւ 2024-2025 թթ. տարեշրջաններուն ցոյց կու տայ, որ համայնքէն ներս հիմնովին հետեւողականօրէն կը կազմակերպուին ազգային-եկեղեցական, կրթամշակութային բնոյթի իրադարձութիւններ, ինչպէս նաեւ կը նշուին հայկական ազգային ու ՀՀ պետական տօները:

